ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«19» հուլիսի 2019 թվականի N:132 ք.Գյումրի

ՀԱՄԱՋԱՍՊ ԽՈՑԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Համազասպ Խոցանյանի 2019 թվականի հուլիսի 17-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Համազասպ Խոցանյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից 20 աշխատանքային օր՝ 2019 թվականի հուլիսի 29-ից մինչև օգոստոսի 23-ը ներառյալ:
2. Համազասպ Խոցանյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Արմենուհի Խալաթյանին:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է